

սաց ղէմ յառաջացող թրքական ուժերը թուրք կառավարութեան թոյլտուութեամբ կամ գիտակցութեամբ չէ որ կը շարժէին, այլ անկախաբար:

Սակայն, կեղծիքը շատ թափանցիկ էր: Հանուէյ այդ մասին ինքն իսկ կը գրէր. «Չէ կարելի ենթադրել, որ այս զորարածինը գործած էր, առանց հրամանի: Ասկէ կը հետեւցըւի, թէ թուրքերը Գիլան մտած են միայն ըզգալու համար ոռոսերու երակին գարկը: Անոնք կը նկատուէին բոլոր երկրին՝ ընտրելագոյն գաւառին վայելողները, թէեւ իրաւ է, որ եթէ անոնք անկէ ետքը սեւէ առաւելութիւն ստացան, ատիկա շատ չնչին էր: Բանաւոր է հետեւցնել, որ թրքաց հետաքրքրութիւնը արծարծուած էր Անգլիացի եւ Ֆրանսացի դեսպաններուն ստիպումներով: Հայերը, որոնք ըստ սովորութեան Գիլանէն մետաքս կը բերէին, այս տակնուվրայութեանց պատճառով դադարեցուցին իրենց կարաւանները, որ առանց այլևայլի գոհացուցիչ էին այդ (Անգլիացի եւ Ֆրանսացի) ազդերուն վաճառականներուն համար»:1)

Այս չարագանց պերճախօս տողերուն վերայ հարկ չկայ որեւէ բացատրութիւն աւելցնել: Անգլիական քաղաքականութիւնը կը շարունակէր ամէն դնով իր հետապնդած նպատակին հասնիլ: Անգոսի ճէնքինսընէ ի վեր գրեթէ դար ու կէս անցեր էր, եւ, սակայն, անոր հետապնդած նպատակին համար գործածուած քաղաքականութիւնը մնացեր է անփոփոխ, բան մը, որ ինքնին կը հաստատէ, թէ անհատական քաղաքականութիւն մը չէր ատիկա, այլ որոշ պետական քաղաքականութիւն մը, որ վերջն ալ այնքա՞ն անշեղ կերպով շարունակուեցաւ ժԹ եւ նոյնիսկ Ի դարուն:

Անգլիական օժանդակութիւնը թուրքիոյ՝ Ռուսաց ղէմ 1855-ին, 1877-ին: Այդ ժամանակ Անգլիացիները թուրքիոյ մէջ ունէին աւելի գերակշիռ դիրք քան Գերմանացիք 1914-18-ին: Անգլիացիք իրենք իսկ կը վկայեն այն անտանելի գոյութեան մասին, որ Հայութիւնը կը քաշքրտէր ժԹ դարուն, որուն համար խարու-

սիկ խոստումներէ զատ ոչ մէկ բան կ'ըլլար:

Ռուսիոյ վրայով հում մետաքսի գործընող Հայ վաճառականները Աստրախանը գործածած են իրրեւ յեմակէտ: ԺՁ. դարէն սկսեալ, Հայ առեւտրականներ գտնուած են Աստրախան եւ Ղլխաւորաբար հում մետաքսի առեւտուրով զբաղած: «Ռուսիոյ մեծ գուռ Ալէքսիս Միխայէլովիչ Թաթարաց ձեռքէն Աստրախանը վերագրուելէ վերջ, մենք հոն կը գտնանք խոշոր քանակութեամբ Անգլիական եւ Հոլանտական կերպասի՝ հոն բերուած Արխանկելէն Ռուս եւ Հայ վաճառականներէ, իրենց Աստրախանի առեւտուր կոչած (չուկային) համար:»1)

Այս վկայութիւնը կը հաստատէ, որ հայերէն զատ Ռուսեր ալ Արխանկելէն Աստրախանի շուկային համար կը հայթայթէին ապրանք: Բնական է խորհիլ, թէ Ռուսերն ալ իրենց Անգլիական եւ Հոլանտական բրդեղէն կերպասներուն փոխարէն այդ երկիրները կ'արտածէին Գիլանի, մանաւանդ Շամախի հում մետաքսը: Սակայն, վստահօրէն կրնանք ըսել, որ Ռուսերուն թիւր եւ ըրած գործը, բաղդատմամբ Հայոց, գրեթէ չնչին էր, եւ աւելի վերջին ժամանակներուն էր զարկ ստացած:

«Երկար ժամանակի ընթացքին մենք չենք գտներ Ռուս նաւորդներ, որոնք նաւած ըլլան Նիշգապատէն աւելի հեռու, ուրկէ անոնք Շիրվանի մետաքս կ'արտածէին: Նոյնիսկ այս առեւտուրը յաճախ ընդհատուած էր, թէ՛ Վոլկայի եւ թէ՛ Կասպեան ծովուն եղերքներուն Գուպանի եւ Նախայի թաթարներէն, ինչպէս նաեւ Գոգադներէն եւ Ռուս ծովահէններէն: Շիրվանի մայրաքաղաքը՝ Շամախի՝ Կասպեան արեւմտեան եղերքին վրայ բնակարանն էր Ռուս վաճառականներուն: Հոն անոնք յառաջ կը տանէին նշանակելի առեւտուր: Սակայն, Լէդկիները, Պարսկաստանը ողողած ըլլալով, կողոպտեցին եւ Շամախին, 1721-ին: Ռուս վաճառական մը, Յյովերինօֆ, կորսնցուց մօտաւորապէս երկու հարիւր հազար դրամուն, որ միայն իր բաժինն էր: Այս ղէպքը Ռուս

1) Անդ՝ էջ 245:

1) Անդ՝ էջ 7, հատոր Ա.ին: